Րուս հետ աշխատելէն իր հրաժարիլը իրեն յաւելեալ ծայրեր չբերաւ, որովհետեւ իր հեռաւոր նախնիներուն հայրենակիցները իր օգտին պիտի չբուժարկէին իսկ: Հայաբնակ Ջաւախքի մէջ Միխայիլ Սահակաշվիլիի ղեկավարած դաշինքը ձայներու մէկ տոկոսն իսկ չէր հաւաքած, այն ժամանակ, երբ արմատական ընդդիմադիրին առաջադրած թեկնածուն գրեթէ յաղթանակ տարաւ ազրպէյճանաբունակ Բիլեմօ Քարթլի շրջանին մէջ: Յատկանշական է, որ հայերը մեծ հաճոյքով քուէարկած էին «գտարիւն» վրացի ձուժպէր Փաթիաշվիլիի օգտին, որ «վրաստանի քաղաքական կայունութեան համար կարեւոր էր իր լսելի Ժովանիայի երկու ժամուան բացատրութիւնը, որով կ'փորձէր փաստել, թէ ինք հայ չէ»: Հայկական ծագում ունենալը մեծ մեղք կը նկատեն նաեւ Աշխատաւորական կուսակցութեան առաջնորդները: Կուսակցութիւնը ստեղծուած քաղաքական իրադրութեան մէջը երկու կողմէն է իշխանութեան: Այդ կուսակցութեան առաջնորդներէն մէկը օրերոյ յայտարարած է, որ Սահակաշվիլի, Ժովանիա եւ Պուրճանաձէ «վրաստանի մէջ հայկական յեղափոխութիւն իրականացուցին»: Նախագահը միտում մըն է, որ բաւական տհաճ զգացողութիւններ կը յառաջանէ: Այն, ինչ կը կատարուի այսօր թիֆլիսի մէջ, որոշ չափով կը յիշեցնէ 1930ական թուականներու Կերմանիան, երբ նացիները սկսան հրէական ջարդերուն համար հիմքեր ստեղծել: Հրեաներուն վերագրուած դերը այսօր կը տրուի հայերուն: Ինչո՞ւ հայերը իրենք յայտնուած են վրացի ազգայնամոյններու ուշադրութեան կեդրոնը: Հետաքրքրական է վրաստանի խորհրդարանի փոխ նախագահ, իշխանամէտ Ընկերավարական կուսակցութեան առաջնորդ Վախթանգ Ռչէնուլիզիի առաջին անգամ չէ, որ հակահայ յայտարարութիւններ կատարած է: «Պէտք է հայրի առնել, որ ոչ թէ հրեաները, այլ հայերը ստանձնած են վրաստանի մէջ դրամատիրութեան զարգացումը: Հայերն են, որ թիֆլիսի մէջ արտադրութիւն հիմնած են, թղթամասեր կառուցած են եւ երկիրը տարած են դրամատիրական ուղղութեամբ: Իմ կարծիքովս, վրացիներուն եւ հրեաներուն միջեւ անհնդուրժողականութեան բացակայութեան պատճառը հրեաներուն նկատմամբ նախանձի բացակայութիւնն է: Ի միջի այլոց, հայերը դարձեւ շարունակ երկրին մէջ տնտեսական բարեփոխումներ իրականացուցած են: Ըստ երեւոյթիս, ասով կը բացատրուին վրացիներուն եւ հայերուն միջեւ եղած յարաբերութիւններուն մէջ նուրբ պահերու առկայութիւնը...», ըսած է Ռչէնուլիզի:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՁ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԴԵՍՊԱՆ ԱՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ ԳԻՐՔԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Միացեալ Նահանգներու Քոնկրէսի գրադարանն ու Մերձաւոր Արեւելքի բաժանմունքը վերջերս կազմակերպած էին պատմական գիտութիւններու դոկտոր, աթաՄիացեալ Նահանգներու մէջ Հայաստանի դեսպան Արման Կիրակոսեանի «Բրիտանական դիւանագիտութիւնը եւ Իրակական Հարցը. 1830-1914» գիրքին շնորհահանդէսը:

Գիրքին հայերէն տարբերակը լոյս տեսած էր 1999ին Երեւանի մէջ, Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Պատմութեան հիմնարկին կողմէ: Իսկ անգլերէն գիրքը հրատարակած է «Կոմիտաս» հիմնարկի հրատարակչութիւնը:

Շնորհահանդէսին ընթացքին խօսք առած է Արման Կիրակոսեան, որ ներկայներուն մանրամասնօրէն ներկայացուցած է գիրքին բովանդակութիւնը, աշխատութեան գլխաւոր նպատակներն ու ինչդիրները: Ան ընդգրծած է անգլերէն հրատարակութեան անհրաժեշտութիւնը: Հեղինակը մասնաւորապէս նշած է, որ աշխատութեան մէջ Մեծն Բրիտանիոյ դիւանագիտական վաւերացուցութիւններուն, դիտական եւ յուշագրային գրականութեան, բրիտանական եւ անգլիկան պարբերականներու նիւթերուն հիման վրայ վերլուծուած է Մեծն Բրիտանիոյ քաղաքականութեան ձեւաւորումն ու զարգացման հիմնական ուղղութիւնները՝ Օսմանեան կայսրութեան, անոր ազգային փոքրամասնութիւններուն, եւ մասնաւորապէս՝ արեւմտահայութեան նկատմամբ, ինչպէս նաեւ բրիտանական դիւանագիտութեան գործունէութիւնն ու դերը Հայկական Հարցի արձարժման տարբեր փուլերուն՝ 19րդ դարու 30ական թուականներէն մինչեւ Համաշխարհային Ա. պատերազմին սկիզբը: Ուշագրաւ է, որ Հայկական Հարցին նկատմամբ Մեծն Բրիտանիոյ վարած քաղաքականութիւնը աշխատութեան մէջ ներկայացուած է միջազգային յարաբերութիւններու գարագջման, Օսմանեան կայսրութեան ներքին ու արտաքին քաղաքականութեան, արեւմտահայութեան իրավիճակին եւ ազատագրական շարժումներուն ընդհանուր խորքին ընդմէջէն: Գիրքին անգլերէն տարբերակին մէջ հեղինակը յատուկ լրացումներ կատարած է անգլիկացի միսիոնարներու գործունէութեան, անգլիկաների կայսրութեան յարաբերութիւններուն, ինչպէս նաեւ Հայկական Հարցին նկատմամբ Միացեալ Նահանգներու եւ Մեծն Բրիտանիոյ մէջ ձեւաւորուած հասարակական կարծիքի վերաբերեալ: Ըստ հեղինակին, իր եւ կիպրահայ պատմարան Ազգային Նասիպեանի

«Բրիտանիան եւ Հայկական Հարցը. 1915-1923» մեկնութիւնները կու գան ամփոփելու 19րդ դարուն եւ 20րդ դարու առաջին քսանամեակին ընթացքին Հայկական Հարցին առնչութեամբ բրիտանական կառավարութեան քաղաքականութեան եւ դիւանագիտական գործունէութեան ուսումնասիրութիւնը: Անգլոպատանայով Հայկական Հարցին գծով Մեծն Բրիտանիոյ դիրքորոշման՝ Արման Կիրակոսեան նշած է, որ իրեն մերձաւոր արեւելեան քաղաքականութեան ամէնէն աշխուժ գերակատար, մինչեւ Համաշխարհային Ա. պատերազմի ժամանակաշրջանը, բրիտանական դիւանագիտութիւնը յարողութեամբ կ'իրագործէր 1830ական թուականներուն իր առջ

Միջազգային Բաղաքական Կեանք

ԱՏԱ ՎԱՂՈՒՄՆ ԲՈՆԱՏԵՐԵՐԸ



Քուրբըրի, որ ներկայիս Պրիւքսէլի մէջ Բրիտանիոյ արտաքին գործոց նախարարութեան կողմէ «արտօնագիրով ազատ մտածողն» է՝ այդ պետութիւնները կը պահանջեն, որ Արեւմուտքը հրաժարի ուրիշ երկիրներու ներքին հարցերուն մէջ միջամուխ չըլլալու իր աւանդական կեցուածքէն: Կրնայ ըլլալ, որ մենք անցեալին սխալեցանք Սատտամի վարչակարգին նման վարչակարգերու հետ մեր վարմունքին մէջ, սակայն ապագային պայմանները տարբեր պիտի ըլլան, կը հաստատէ Քուրբըրը:

Յուանք: Սակայն կը թուի, թէ ոչ միայն չենք առաջնորդուիր զէպի ժողովրդավարութեան եւ պարկեշտութեան աշխարհ, այլ իրողութեան մէջ մենք ետ կ'երթանք զէպի Պաղ պատերազմի յուսկոյն աշխարհը: 11 Սեպտեմբերէն ետք Միացեալ Նահանգները զինուորական նկատուելի օժանդակութիւն կը յատկացնեն աւելի քան 130 երկիրներու, որոնց մեծ մասը երրորդ աշխարհի աղքատ երկիրներ են, որոնց ձեռնուտու չէ իրենց տնտեսութիւնները այդ ձեռնուտու չըլլալու:

Ներկայիս շուրջ հինգ հարիւր ամերիկացի զինուորական խորհրդատուներ, Վիետնամի արձակուրդէն իրենց ականջին, կը դռնուին Վրաստանի մէջ՝ օգնելու նախագահ Շեւարտնաձէին «աւարտեկիներու» ղէմ իր պայքարին մէջ: Խըրըզդիստան իր կարգին «պատիւը ունի» թէ՛ ամերիկեան եւ թէ՛ ռուսական զինուորական խորհրդատուներու շնորհիւ Վրաստանը աշխարհի ոստիկանն է ոչ միայն ի խնդիր ապահովութեան, այլեւ ժողովրդները իրենց բռնատէրերէն ազատելու համար: Կան ձախողած պետութիւններ, ըստ Ռոպըրթ

Թեմար Միացեալ Նահանգներու կառավարութիւնը պաշտպանած կ'ըլլայ աշխարհի ամէնէն աղքատ վարչակարգերէն մէկը՝ աւելցուել քարիւղ այդ խառնուրդին եւ կ'ունենան ապագայ սատտամեան ուրիշ երկիրներու ներքին հարցերուն մէջ միջամուխ չըլլալու իր աւանդական կեցուածքէն: Կրնայ ըլլալ, որ մենք անցեալին սխալեցանք Սատտամի վարչակարգին նման վարչակարգերու հետ մեր վարմունքին մէջ, սակայն ապագային պայմանները տարբեր պիտի ըլլան, կը հաստատէ Քուրբըրը:

Այս բոլորէն ետք, ի՞նչ դործ ունի Համաշխարհային Դրամատան Միջազգային Ֆինանսական ըն-

յալարարուեցաւ, որ քուէներու 79,5 տոկոսով Ալիեւի որդին՝ նախկին քաղաքացիական պատերազմի ժամանակահատվածի իր հօրը՝ Սակայն ԵԱՀԿ, որ հետեւեցաւ ընտրութիւններուն, չ'ընդունիր այդ արդիւնքը՝ գեղծարարութեան կասկածներով, իսկ ընդդիմադիրները իրենք զիրենք գտան գնտանի մէջ:

Վրաստանի խորհրդարանական ընտրութիւնները

ՇԵՒԱՐՏՆԱԾԷ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ԽՆԴԻԷ ԲՈՂԱՐԵԱՆԸՆ



Որոշ տուեալներու համաձայն, Աճարիոյ ղեկավար Վրաստանի նախագահին անուշով զինուորական օգնութիւն խնդրած է Հայաստանէն՝ ընդդիմութեան պաշտպանութեամբ համար:

Աճարիոյ ղեկավար Ասլան Ապաշիձէի անսպասելի շրջադարձները Երեւան եւ Պաքո վերջապէս փարատեցին այն կասկածները, որ Վրաստանի նախագահը պատրաստ չէ զիջելու ընդդիմութեան ճնշումներուն դիմաց եւ մտադիր չէ հրաժարական տալու: Դժուար չէ նախադրել, թէ Աճարիոյ ղեկավարը խօսած է Ռոպըրթ Քոչարեանի եւ իր համ Ալիեւի հետ: Կասկած չկայ, որ թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Ազրպէյճանի մէջ աջակցութիւն կալուածը արդեօք միայն բարոյակա՞նջ աջակցութիւն է:

Երեւան վրացի նախագահներ փրկելու փորձառութիւնը ունի: 1993ին օգնութեան խնդրանքով Լեւոն Տէր Պետրոսեանին ղրմեց Վրաստանի օրուան ղեկավար Զվիտ Կամախուրտիան: Հայաստանի նախագահը իր պաշտօնակիցին համար ապաստան ապահովեց: Այսօր վտանգ կայ, որ այդ իրադարձութիւնները կրկնուին: Ստեղծուած կացութիւնը ոչ միայն կը յիշեցնէ Կամախուրտիանի արիւնալի վարչակարգի յեղաշրջումին շրջանը, այլեւ՝ անկէ մէկ տարի ետք կատարուած զէպերը: Յեղափոխութեան իրենք արդիւնք՝ իշխանութեան զլուխ եկող էտուարտ Շեւարտնաձէին չկրցաւ հսկել երկիրն իրավիճակին վրայ, որովհետեւ զինեալները գրաւեցին Վրաստանի արեւմտեան հատուածը եւ շարժեցան զէպի Թիֆլիս: Այդ օրերուն Շեւարտնաձէի ղրմեց Հայաստանի օգնութեան: Յայտնի է, որ Վրաստանի ղեկավարը Երեւանէն խնդրեց զօրք ուղարկել, որպէսզի զինք պաշտպանեն մայրաքաղաքին վրայ յարձակողներէն: Բնակարար, խնդրանքին ընդամաքը՝ լու պարագային, կարգ ու կանոնի հաստատումէն ետք հայկական զօրքերը Երեւան վերադարձի ճամբուն վրայ որոշ ժամանակի համար կրնային հաստատուել Ջաւախքի մէջ: Այս մէկուն կը զիտակցէր Շեւարտնաձէին, ան խոնարհեցաւ Երեւանի առջեւ: Սակայն Լեւոն Տէր Պետրոսեան այս անգամ որոշեց բաւարարուիլ միայն բարոյական աջակցութիւն ցուցաբերելով՝ խուսափելով կողմանի մէջ ներագրգային նոր տագնապներու առիթ տալէ:

Երեւանեան մամուլին մէջ ենթադրութիւններ կը կատարուին, որ Ասլան Ապաշիձէի եւ Ռոպըրթ Քոչարեանի միջեւ տեղի ունեցած բանակցութիւններուն ընթացքին քննարկուած է Շեւարտնաձէի կառավարութեան Երեւանի կողմէ զինուորական օգնութիւն տրամադրելու կարելիութիւնը: Կան նաեւ շուտեւ, որ Ապաշիձէ հանդիպած է այդ օրերուն Երեւան գտնուող Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանովի հետ, որուն կ'ըսուի, թէ ներկայացած է միեւնոյն առաջարկով: Նշենք, որ թէ՛ իրապէս նման տրամադրութիւններ կան Թիֆլիսի մէջ, ապա Ասլան Ապաշիձէն, որ կը նկատուի Շեւարտնաձէի համակիրը, իսկապէս կրնայ նշանակալից զբեր խաղալ: Ան վստահութիւն կը վայելէ թէ՛ Երեւանի եւ թէ՛ Մոսկուայի մէջ: Կենթադրուի, որ Հայաստանի ղեկավարութեան համար անոր խօսքը աւելի կ'ընդունուի կ'ունենայ, քան՝ ուրիշ այլ վրացի գործընկի խօսքը: Այս հանգամանքը անշուշտ նկատուած է Շեւարտնաձէին, երբ որոշած է նոր համակիրն ուղարկել զրացի երկիրները:

Ալիեւի՝ Շեւարտնաձէի խորհրդակցանքները շատ հաւանաբար համոզուած են, որ Հայաստան կը փափաքի ձեռքազատիլ այն մեղադրանքներէն, թէ ինք կ'օժանդակէ ընդդիմութեան ղեկավարներուն:

Երեւանի իրօք անհանգստացած է Վրաստանի ապակայունացման հեռանկարով: Սակայն ուրկէ՞ բխած է այն համոզումը, թէ միայն Շեւարտնաձէի անձով պայմանաւորուած է այդ կայունութեան յոյսը: Ինչո՞ւ պէտք է, որ Հայաստան միջամտէ զրացի երկրի ներքաղաքական կեանքին... Այս հարցումին յստակ պատասխանը տակաւին չկայ:

«ՓՆԱՐՄԻՆԻՆ ԿԱՅՔ»



կերակցութիւնը, որ վրամ փոխ կու տայ քուրբըրի մը կառուցման համար, եւ որ գրեթէ համաշխարհային բողոքներ հրահրած է կենսաբանական զինուորական խորհրդատուներու շնորհիւ Վրաստանը աշխարհի ոստիկանն է ոչ միայն ի խնդիր ապահովութեան, այլեւ ժողովրդները իրենց բռնատէրերէն ազատելու համար: Կան ձախողած պետութիւններ, ըստ Ռոպըրթ



հարցը. օրական մէկ միլիոն տակաւ քարիւղի մղումով շահը շուտով կ'արդարացնէ ծախսը: Հարցը քաղաքական ինքն է, որ Համաշխարհային Դրամատունը, ինչպէս նաեւ Վերակառուցման եւ Ջարգացման եւրոպական դրամատունը յանձն կ'առնեն: Միայն մէկ մասը տալով՝ միջազգային հանրութիւնը, ներառեալ մենք՝ բրիտանացիներս, ըստ այսօրվա կ'ապահովենք այդ պիտի վարչակարգերուն գոյատեւումը:

Եւ ի՞նչ վարչակարգեր: Ազրպէյճան կը կառավարուէր հիւանդոտ ընտանիքի Հայտար Ալիեւի կողմէ, որ իր նախագահութեան տարիները անցուց իր մրցակիցներն ու թշնամիները հեռացնելով, իսկ Հոկտեմբերի ընտրութիւններէն ետք ձեռք ձգելու դասաւորումներ ընել, բողոքի ցուցեր ծայր առին եւ արդիւնքներուն յայտարարութիւնը յետաձգուեցան: Ետուարտ Շեւարտնաձէին Սատտամ Հիւսէյն մը չէ, սակայն Ուզպէքիստանի իսլամ Ապտուղանեւիջ Քարամովը կրնայ ըլլալ: Զուգահեռներ կը դժուար զէպի բռնատիրութիւն իջնելու անոնց ընթացքին վրայ մեր վերաբերումին մէջ, երբ Արեւմուտքը կրնայ աւելի լաւ դեր ունենայ: Հոս չենք խօսիր բռնատիրական վարչակարգերու մասին կամ արեւմտեան հոգատարութիւնը պահանջող «ձախողած պետութիւններու» մասին:

ԱՐԻՆԸ ՀԱՄԻԹԸՆ

«Տը Ինտիֆեստար»

Մինչ Համաշխարհային Դրամատունը Ազրպէյճանէն Վրաստանի վրայով զէպի Միջերկրական քարիւղ հասցնող կասպեան քարիւղատարին գծով վաւերացում կը սպասէ, վրացական ընտրութիւններուն արդիւնքներուն հրապարակումը յետաձգուեցաւ բողոքի ցուցերու եւ գեղծարարութեան համար տարած ամրաստանութիւններու պատճառով: Ազրպէյճանի պարագան երեք շաբաթ առաջ աւելի մտահոգիչ էր, երբ նախկին նախագահին որդին իշխանութեան բերելու համար պաշտօնապէս դասաւորուած ընտրութիւններէն ետք տեղի ունեցած բողոքի ցուցերը պատճառարձան տասնեակ մը զոհերու եւ ընդդիմադիրներու մեծ մասին ձերբակալութեան:

Քարիւղ, փտածութիւն եւ բռնատիրութիւն. եւ օղակը կը շարունակուի, երբ մենք կը սատարենք յոռեգոյն վարչակարգերուն՝ ռեժիմի մատակարարման կայունութեան եւ ապահովութեան

ի խնդիր: Նոյնը պատահեցաւ Միջին Արեւելքի մէջ տասնեակ տարիներ առաջ: Այդ էր, որ քաղաքացիական պատերազմը, ինչպէս նաեւ մտածէ, թէ ինք կրնայ ներխուժել Քուէյթ: Եւ նոյնը գարձեալ պիտի կրկնուի, երբ Ղազախստան այս տասնամեակի վերջաւորութեան սկսի շահարկել իր քարիւղի հսկայ պահեստները:

Մենք միայն կրնանք մաղթել, որ հակառակը պատահի: Իրաքի ղէմ յարձակումին կ'ընկերանար մարդասիրական միջամտութեան պողպատաբաշտ միջամտութեան մը: Բարի միտումներ ունեցող ազատականները եւս կը միանան իտէլայապաշտ նոր պահպանողականներուն իրենց այն տեսլականին մէջ, թէ Արեւմուտքը աշխարհի ոստիկանն է ոչ միայն ի խնդիր ապահովութեան, այլեւ ժողովրդները իրենց բռնատէրերէն ազատելու համար: Կան ձախողած պետութիւններ, ըստ Ռոպըրթ

ND N. DEDEIAN s.a.r.l.
SANITARY WEAR & TILES

FABBRICA iris
MARMMI E GRANITI

N. DEDEIAN s.a.r.l. was established in 1951. Since then we are working with sanitary ware ceramic tiles, fittings & hydromassage tubs.

Old Port, bar - Genova - Italia

Planet, ristorante - Reggio Calabria - Italia

Hotel Phoenicia - Catania - Italia

Caletta 2, via Marconi - Genova - Italia

We are sole agents of Italy's finest ceramic tiles Gruppo ABK, Epoca, Tempra, Elle-gi, IRIS. Those products are all designed to meet the latest dwelling requirements, although perfectly in line with tradition.

LEBANON - Beirut - Nahr El-Mot - Roumeih Highway - N Dedeian Center - Cell: (+961) - 3 - 204306 - Tel: (+961) - 1 - 901092 - Fax: (+961) - 1 - 901093
LEBANON - Tripoli - El-Mina - Custom Str. - Tel: (+961) - 6 - 615095 - Telefax: (+961) - 6 - 202126 - E-mail: ndedeian@hotmail.com


«ԱՉԴԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազրպէյ» մէջ որելէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ. ՄԻՆՁԵՒ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 5:00:

ՄԱՆԱԶԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահագր կ'ընդունուի միայն ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ԱՌՈՂՋԱՊԱՐԱԿԱՆ

ՄԻՏՔԸ ԳՈՐԾՕՆ ՊԱՀԵԼԸ ԱԼՑԱՅՄԵՐԻ ՎՏԱՆԳԸ ԿԸ ՆՈՒԱԶԵՑՆԷ



Կ'ակնկալուի, որ խենթութեան պարագաներու, որոնց կարգին՝ Ալցալմըրի տառապողներուն թիւը մեծ աճ արձանագրեց 50 տարին:

Չափահաս տարիքին ընթացում, թանգարաններ այցելութիւն եւ բարեկամներու հետ ընկերային միջոցառումները օգտակար ըլլալ Ալցալմըրի հիւանդութեան վտանգը նուազեցնելու, կ'ըսեն շուէտացի հետազոտողներու եւ Հարաւային Քարիֆորնիա համալսարանի կողմէ կատարուած ուսումնասիրութեան մը արդիւնքները:

Ուսումնասիրութիւնը, որ օգտագործած է մտային գետնի վրայ իրարմէ տարբեր երկուորեակներու մասին տեղեկութիւններ, առաջինն է, որ կ'ուսումնասիրէ փամայնցի առնչուող գործունէութեանց եւ մտային աշխատանքի կորուստին միջեւ կապը:

Հետազոտողները օգտագործած են 1886 - 1925 Շուէտի մէջ ծնած նոյն սեռին պատկանող երկուորեակները: 1960ական թուականներուն երկուորեակները պատասխանած են հարցարաններու, որոնք կը վերաբերէին 40 տարեկանէն առաջ անոնց փամայնցի գործունէութեանց: Այս վերջիններուն կարգին եղած են՝ ընթացանութիւն, ընկերային բնոյթի այցելութիւններ, թատրոն, շարժապատկեր, պարտէզին մէջ աշխատանք, մարզանք եւ ակումբներու անդամակցութիւն:

1980ական թուականներուն երկուորեակները բժշկական քննութիւններու ենթարկուած են ի միջի այլոց մտային կարողութեանց կորուստը ստուգելով:

Ուսումնասիրուած 107 երկուորեակ գոյգերուն պարագային, մէկը մտային հարց, իսկ միւսը մտային բնականոն աշխատանք ունեցած է:

Արդիւնքները ցոյց տուած են, որ փամայնցի առնչուող գործունէութեանց աւելի մեծ մասնակցութիւն մը կը նուազեցնէ Ալցալմըրի հիւանդութեան եւ խենթութեան վտանգը, նոյնիսկ երբ կրթութիւնը նկատի առնուած է:

Ուսումնասիրութեան ձեռնարկած գլխաւոր մասնագէտ Մայքըլ Քրաու այս ամսուան սկիզբը յայտնած է, որ մինչ գիտնականները չեն փաստած «զայն գործածէ՛ կամ կորսնցո՛ւր» ասացուածքը, «բնականաբար տրա-

ՅԱՌԱՋԻԿԱՅ ՏԱՆՆԱՄԵԱԿՆԵՐՈՒՄ ԱԼՑԱՅՄԵՐԻ «ՀԱՄԱՃԱՐԱԿ ՄԸ»

Ամերիկացի հետազոտողներու նախատեսութեամբ, 2050ին Ալցալմըրի հիւանդութիւնը դիմագրաւող անձերու թիւը պիտի եռապատուի, նկատի ունենալով, որ ընկերային թիւը պիտի բարձրանայ եւ գոյութիւն ունեցող հիւանդները աւելի երկարակեաց պիտի ըլլան: Բրիտանիոյ մէջ, ըստ Ալցալմըրի Ընկերակցութեան նախատեսութիւններուն, յառաջիկայ 50 տարիներուն հիւանդներուն թիւը 150 առ հարիւրի աճ պիտի արձանագրէ:

Ամերիկեան խմբակին ուսումնասիրութեան համաձայն, 21րդ դարու կիսուն, մօտաւորապէս 16 միլիոն ամերիկացիներ Ալցալմըրի հիւանդութիւնը պիտի դիմագրաւեն:

Գլխաւոր պատճառը այն տուեալն է, թէ ապագային մեծ թիւով մարդիկ հաւանաբար 80 կամ 90 տարեկանէն աւելի պիտի ապրին:

80 տարեկանէն ետք հինգէն մէկ հոգի մտային խանգարումի տեսակ մը կը դիմագրաւէ, կ'ըսեն նախատեսութիւնները:

Մասնագէտները ահազանգ հնչեցուցած են, թէ այս ուսումնասիրութիւնը դէպի առաջ կարեւոր քայլ մըն է՝ հաստատելու համար, «թէ մենք ի՞նչ պիտի դիմագրաւենք ապագային»:

«Եթէ մօտ առնենք պատասխանները չզտենք, բազմաթիւ ճակատներու վրայ աղէտայի պիտի ըլլայ», ըսած է ամերիկեան Ալցալմըրի ընկերակցութեան պատասխանատուներէն՝ Շիլտըն Կոլտպըրը:

Այսուհանդերձ, աւելի դրական մօտեցումով մը, օրին մասնագէտները դիտել տուած են նաեւ, որ թէ հիւանդներու թիւը պիտի աւելնայ, սակայն «50 տարիէն հետագոտութեանց մէջ հսկայ յառաջդիմութիւններ արձանագրուած պիտի ըլլան»:

Բրիտանական Ալցալմըրի ընկերակցութեան տնօրէն Հէրի Քէյթլըն դիտել կու տայ, որ անցողի 50 տարիներուն հետազոտողները աւելի շատ տեղեկութիւն յայտնաբերած են ուղեղին մասին, քան՝ նախորդ 5000 տարիներուն:

«Հետեւաբար հաւանականութիւնը պիտի ըլլայ այն, թէ 50 տարիէն օգտակար ու ազդու դարմանումներ, կանխարգելիման միջոցներ եւ նոյնիսկ բուժում պիտի ըլլայ», կը շեշտէ ան:

Ան կը գգուչացնէ սակայն, որ ասիկա պատահելու համար «հետազոտութեանց ֆինանսավարումին մէջ իսկական աճի պէտք ունինք», դիտել տալով, որ այս մարդկին մէջ հետազոտութիւնները ետ կը մնան՝ բաղդատած քաղցկեղի եւ սրտի հիւանդութեանց նման առողջապահական հարցերու վերաբերեալ հետազոտութեանց:

ԳԻՏԱԿԱՆՆԵՐ ՈՒՂԵՂԻ ԶԻՓ ՄԸ ԿԸ ՄՇԱԿԵՆ

Ամերիկացի գիտնականներ կ'ըսեն, թէ սիլիքոնէ շինուած չիփ մը կրնայ օգտագործուիլ փոխարինելու համար հիփոքամփը, ուր յիշատակներու պահ գրուելը կը համակարգուի:

Եթէ առնչութիւնը ուղեղներու վրայ գիտնականներուն փորձարկումները յաջող ըլլան, անոնք ողջ առնչութիւններու վրայ, ապա յիշողութեան կապուած աշխատանքներու համար մարդուած կապիկներու վրայ պիտի փորձարկեն արուեստական հիփոքամփը՝ նախքան մարդոց մէջ փորձարկումները:

Նպատակը ուղեղային վնասուած հիւսկէնը սիլիքոնէ չիփով փոխարինել է:

Հետազոտողները կը գիտակցին, որ իրենց աշխատանքը կրնայ վիճելի ըլլալ եւ բանավէճերու դուռ բանալ որովհետեւ ուղեղը կ'ազդէ տրամադրութեան, գիտակցութեան, արթնութեան, ինչպէս նաեւ յիշողութեան վրայ եւ այս բոլորը կապուած են անձի մը ինքնութեան:

Սակայն երկու Սի-էլ-էլ-ի մասնագէտներէն թիտոյր Պրոբեր, որ գլխաւորած է հետազոտութիւնները, կ'ըսէ, թէ այս քայլը անհրաժեշտ է, դիտել տալով, որ եթէ հիփոքամփով կարելի չըլլայ ընել, ուղեղին որեւէ այլ բաժինով կարելի պիտի չըլլայ:

Կ'ենթադրուի, որ հիփոքամփը քրոտրով «կ'արձանագրէ» փորձառութիւններ, որպէսզի կարելի ըլլայ գանոնը իրրեւ երկար տեւողութեան վրայ յիշատակներ պահ դնել ուղեղին մէջ այլ բաժինին մէջ:

Հետազոտողները 10 տարի աշխատած են արուեստական հիփոքամփը մշակելու համար: Անոնք ճշգրտօրէն կ'ըսեն, թէ ուղեղին մէջ այդ բաժինը ի՞նչպէս կ'աշխատի: Հետեւաբար անոնք պարզապէս «ընդօրինակած են» անոր վերաբերմունքը:

Յամենայնդէպս մասնագէտները կը խօսին երկար տարիներու մասին՝ նախքան նման սարքի մը մարդոց ուղեղին մէջ գործածութիւնը:

ԾԵՐՈՒԹԵԱՆ ՄՏԱՅԻՆ ԴԱՆԴԱՂՈՒԹԻՒՆԸ ԿՐՆԱՅ ԴԱՐՄԱՆԵԼԻ ԸԼԼԱԿ



Ուսումնասիրութեան համար օգտագործուած են չորս տարեկան (ձախիմ) 26 տարեկան (աջիմ) կապիկներ:

Ծերութեան բերմամբ ուղեղին դանդաղութեան պատճառով ուղեղին քիմիական մէկ նիւթին պակաս է: Այդ նիւթը կ'օգնէ ջղային ընթացումներուն, որ կարեւորն է ընտրել այն, որուն պիտի հակադարձեն, կ'ըսէ ուսումնասիրութիւնը մը, որ օգտագործած է աշխարհի մէջէն հին կապիկները:

Ուղեղային բարձր մակարդակի աշխատանքներ, ինչպէս՝ տեսողութեան ճամբով ճանաչում կամ լեզուական հասկացողութիւն, կարիքը ունին ուղեղին մէջ տեղեկութեանց «հասկացողութեան», սակայն անոնք անկում կ'արձանագրեն, երբ մարդիկ կը ծերանան: Մյուս անկողին պատճառը կը թուի ուղեղային կապիկներին նուազումը ըլլալ, կ'ըսեն ամերիկեան Եուլիա համալսարանին բժշկագիր:

տուութեան բաժանմունքին հետազոտողները: Մաքաթ տեսակի կապիկներ, մարդոց մօտ 90 տարեկանի համապատասխան տարիքով, այնքան «սուր միտք» չեն ցուցաբերած տեսողական փորձարկումներու մէջ, բաղդաբարձ աւելի երիտասարդներու, հակառակ իրենց կատարեալ տեսողութեան: Սակայն, երբ անոնց հայտնաբերուած են դեղեր՝ ուղեղին մէջ կապիկներու համաժամանակ արձանագրած են:

Առուտի Լեւընթալ կ'ըսէ, թէ կապիկներու հայտնաբերուած ջղային ընթացումները կը հանդարտեցնէ, եւ անոնք ընտրելու աւելի կարողութիւն կ'ունենան: Կարեւոր տուեալ մըն է այն, որ մտային անկումը կրնայ դիւրաւ դարձանալ:

Լի, կը յայտնէ ան, դիտել տալով, որ բոլոր ընթացումները տակաւին հոն են եւ կը գործեն ու հարցը «փոխան տարիքով, այնքան «սուր միտք» չեն ցուցաբերած տեսողական փորձարկումներու մէջ, բաղդաբարձ աւելի երիտասարդներու, հակառակ իրենց կատարեալ տեսողութեան: Սակայն, երբ անոնց հայտնաբերուած են դեղեր՝ ուղեղին մէջ կապիկներու համաժամանակ արձանագրած են:

Լեւընթալ կը յայտնէ, թէ իր խմբակը տակաւին մարդոց գծով ուսումնասիրութիւններ չէ ըրած եւ կը զգուշացնէ մարդիկ կապիկներէն: Կարեւոր տուեալ մըն է այն, որ մտային անկումը կրնայ դիւրաւ դարձանալ:

ՈՐԱԿԱԻՈՐ ՔՈՒՆԸ «ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՓՐԿԷ»

Նոյնիսկ տուեալներ, որոնք կը մոռցուին մարդոց կողմէ զբաղած օրուան մը ընթացքին, կրնան դարձեալ յիշուիլ, եթէ այդ օրուան վերջերս ուղեղին հանգիստը, որակաւոր քունը մը ունենայ անձը:

Գունի օգտակարութիւնը լաւ ծանօթ է ամենուն, սակայն Շիքալոյի համալսարանին կարգ մը հետազոտողները գիտական փաստեր հայտնաբերած են, թէ քունի ընթացքին ուղեղային գործունէութիւնը սորվելու աւելի բարձր մակարդակի ձեւեր կը քաղաւթէ:

Չոկտեմբերին «Նէյ-չըր» թերթին մէջ լոյս տեսած տեղեկագիրի մը մէջ հետազոտողները կ'ըսեն, թէ ուղեղը կրնայ կորուսած «փրկել» գիշերուան քունին ընթացքին:

Երբ ուղեղին առաջին անգամ մը պահանջուի բան մը յիշել, այդ յիշողութիւնը «անկայուն» վիճակով կը գետեղուի, ինչ որ կը նշանակէ, թէ անիկա կ'ընայ կորսուիլ: Որոշ փամայնակ մը ետք ուղեղը կը հաստատէ այն տեղեկութիւնները, զորս կարեւոր կը նկատէ «կա-

յուն», աւելի մնայուն վիճակի մը մէջ:

Այսուհանդերձ, Շիքալոյի համալսարանին հետազոտողները կ'ըսեն, թէ կարելի է «կայուն» յիշողութիւնը մը դարձեալ «անկայուն» դարձեալ՝ պարզապէս զայն վերյիշելու ճամբով:

Ասիկա կը նշանակէ, թէ յիշատակները կրնան փոփոխութեան ենթարկուիլ, ապա դարձեալ պահպանուի նոր փորձառութեանց լոյսին տակ:

Տէնիլը Մարկոլիազ կ'ըսէ, որ քունը առնուած երկու անգամ ազդեցութիւններ ունի սորվելու վրայ:

«Քունը կը հաստատէ յիշատակները՝ գանոնք պաշտպանելով աւելի ուշ մաշումը: Կը թուի նաեւ, որ քունը կրնայ վերադառնալ կամ վերահաստատել յիշատակներ», կ'ըսէ ան:

Մարկոլիազ եւ անոր գործակիցները փորձարկած են արձանագրուող կարգի աշակերտներու 3 խմբակներու կարողութիւնը՝ հասկնալու բաները, որոնք ստեղծուած են անոնց հասունանան, եւ կը մարդոց հասկնալու մը կողմէ, եւ որոնք հասկնալու գործընթաց մը, կը յայտնէ ան:

«Քունը կ'օգնէ կարգ մը յիշատակներու, որ անոնք հասունանան, եւ կը մարդոց հասկնալու մը կողմէ, եւ որոնք հասկնալու գործընթաց մը», կ'ըսէ մասնագէտը:

Պատրաստեց՝ Ս. Ա. ՊՈՅԱՃԵԱՆ (Աղբիւրներ՝ «ՈՈՅՈՐԸ», «ՊԻ. ՊԻ. ՍԻ», «ՇԵԼՏԵՅ»)

ՄՇԱԿՈՅԹ, ԾԻՆԵՐ՝ ԱԼՑԱՅՄԵՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐ

Ալցալմըրի հիւանդութեան առնչուող նորագոյն ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, թէ ծիւցային տուեալներ կրնան անձի պարկածելի հետ «գործել»՝ աւելցնելով հիւանդութիւնը դիմագրաւելու անոր հաւանականութիւնը:

Սաճ Գրանտիսթրոյի մէջ Մայիսի վերջերս տեղի ունեցած համագումարի մը ընթացքին բժիշկները ըսած են, թէ երկար տեւելի վեր գիտնել, թէ ծիւցային տուեալները բնականաբար կարգ մը խմբակներու աւելի հաւանականութիւն կու տան հիւանդութեան տառապելու:

Սակայն նորագոյն ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ անձի մը ապրելաձեւը եւ սննդականոնը կրնան նոյնքան կենսական ըլլալ ճշդելու, թէ ծիւցային տուեալները գործնականապէս «պիտի թարգմանուի»:

Տոքթ. Հիւո Էնտրի կը յայտնէ, որ ծիւցային տուեալներու եւ շրջապատին միջեւ կապին ամէնեւ համարժեքի փաստերէն մէկը ձեռք բերուած է բաղդատելու: Ետք Ալցալմըրի համալսարանի անդամները արեւմտեան փոփոխութիւններու եւ Ինտիանա փոփոխութիւն մէջ բնականօրէն փոփոխելի ամբիկացիներու մէջ:

Թեւեւ երկու խմբակները ծիւցային նոյն հիմնական ռիթմի տուեալը ունին, սակայն փոփոխելի ամբիկացիներու շատ աւելի մեծ համեմատութիւն մը Ալցալմըրի եւ խենթութեան տեսակ մը կը դիմագրաւէ, ըստ մասնագէտներուն:

Էնտրիի համաձայն, ասիկա ցոյց կու տայ, որ այլ տուեալներ, ինչպէս՝ բոլորքերով բարձր համեմատութիւններով սննդականոն մը, կրնան բարձրացնել Ալցալմըրի դիմագրաւելու վտանգը, յատկապէս այն անձերուն պարագային, որոնք արդէն ծիւցային նախատրամադրուածութիւն ունին այդ գծով:

Տոքթ. Ճաքոպօ Միցըր դիտել կու տայ, որ նոյն նախնիները ունեցող մարդիկ, որոնք շրջապատի տարբեր պայմաններու ենթակայ են, հիւանդութիւնը տարբեր օճակով կ'արտայայտեն (կամ չեն արտայայտեն):

Հետազոտողներուն համաձայն, տակաւին բազմաթիւ անպատասխան հարցումներ կան, յատկապէս թէ ինչպէս սննդականոնը կ'աշխատէ յայն արտայայտելու անձի մը ծիւցային հետ կ'առնչուի:

Կ'ՈՒՋՈՒՄ
Ոսկերչական մոմի վրայ աշխատող գործաւորուհիներ: Դիմել՝ հեռ. 01-242549:

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ
«Ազգակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողները կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատում) ներկայացնել «Ազգակ»ի ծանուցումներու գրասենյակը:

www.aztagdail.com

«ՎԱՆԱՅ ՉԱՅՆ»-Ի ԱՅՍՈՐՈՒՄ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ
 8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
 8:45.- «Աստղեր»
 9:40.- «Առաւօտեան տոն»
 11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
 1:30.- Հայաստանեան լուրեր
 3:00.- Արաբերէն յայտագիր.
 հարցազոյց բեմադրիչ Լաստր Ֆաքիտի հետ.
 կը խօսի «Սուփոր Սթար 2»-ի նոր եղանակի եւ մամուլի ատկիւրի մանրամասնութիւններուն մասին ինչպէս մանկ կանդիդատներու իր գործերն «Լա Եուսալ» յայտագրին
 8:00.- «Դալար բարոյի» հայերէն հարագատ երգի մատուցում



ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE


AT HOME
 •Wheelchair
 •Walker
 •Electric Bed
 •Manual Bed
 •Water Mattress
 •Cans
 •Sticks
 •Serum Tripod
 •Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

•Over Bed Table
 •All Kinds Of Oxygen
 We Also Provide
 •Laboratory service,
 •Physiotherapist
 •Nurses Aids
 •P.T.S. (AMBULANCE)

ՅՈՒՅԱՍՏԱՐԱԿ՝ «ԱՐԻՆ» ՄԵՆՅԸՐ ԳՐԱՄԵՆԵԱԿ՝ ԱՅՇԸԼ, ԱՅԵՏԻ ԶԵԼԵ, Բ. ՅԱՐԿ ԵՏՈ. (01) 242553/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.



ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5594 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

- ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ ՈՒՂԱԿԱՅԵԱՑ**
- Մանրամասն:
 - Անմիջապէս - Շին Ֆէյնի գինուորական թեւ:
 - Պատասխան:
 - Գոյութիւն ունին - Հասկաթուռ, հատալից:
 - Ընդունակ - ձարպտո:
 - Իգական օտար անուն - Կատարեյապէս:
 - Կրկնուած բաղաձայններ - Այբուբենէն:
 - Ի հարկէ - Տառի մը անունը:
 - Եւրոպական Աւստրալիանի գրչանունը - Այբուբենէն:
 - Ծնող - Վատատոհմիկ:
 - Համաձայն - Վարս:
 - Հրոսակ - Յուցական անական:
 - Ամբողջական հաց - Արմէն:
 - Խոռոչ (հակ) - Ներքին:
 - Վերտիկ օփերաններէն - Երաշխակ:
 - Մեղկանայ - Գեղմ:
 - Փափուկ, բարակ:
 - Արական օտար անուն - Թուրքիկի ծննդավայրը - Աբաղաղի կարթ:
 - Առարկայ - Գետեզերեայ ծառ:
 - Սունգագետ - Բազրատ Այվագեանցի երկերէն՝ «... Ծախուեցաւ»:

ԹԻՒ 5593 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

1	Ս	Պ	Ե	Ղ	Ա	Ն	Ի	Մ	Մ
2	Տ	Ա	Ռ	Ե	Ղ	Մ	Ի	Ն	Ա
3	Ի	Ր	Ա	Կ	Ա	Ն	Մ	Ա	Ր
4	Պ	Է	Լ	Խ	Ա	Ղ	Ա	Ց	Ք
5	Ո	Ն	Ռ	Ի	Թ	Ա	Ո		
6	Ի	Ձ	Ա	Ն	Ա	Կ	Ր	Ռ	
7	Մ	Ռ	Ա	Ի	Խ	Ի	Գ	Ա	
8	Ա	Ի	Ե	Լ	Շ	Ո	Մ		
9	Ա	Մ	Ա	Ն	Ա	Կ	Տ	Ա	Պ
10	Հ	Ա	Կ	Ա	Կ	Ի	Փ	Օ	

ար 94

bezdig_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէշուրի սակարանին մէջ օտար դրամացիներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.
 Սուրիական թղթակի 28,75 - 29,00 լ.ն.
 Քուէթեան տինար 5110,00 - 5135,00 լ.ն.
 Յորդանանեան տինար 2121,00 - 2131,00 լ.ն.
 Պահրէյնեան տինար 3985,00 - 4010,00 լ.ն.
 Ա.Մ.Էմիրութեան տինար 410,75 - 412,75 լ.ն.
 Քաթարեան դիալ 413,75 - 415,75 լ.ն.
 Մեյուտական դիալ 402,00 - 404,00 լ.ն.
 Օմանեան դիալ 3895,00 - 3920,00 լ.ն.
 Եգիպտական կինէ 220,00 - 230,00 լ.ն.
 Անգլիական սթրլին 2545,00 - 2555,00 լ.ն.
 Զուիցերիական ֆրանք 1141,00 - 1146,00 լ.ն.
 Թրքական լիրա 102,00 - 102,50 լ.ն.
 Կիպրական փաունտ 3035,00 - 3060,00 լ.ն.
 Ճափոնական հապար եէն 13,70 - 13,80 լ.ն.
 Անեթիկեան տոլար 1501,00 - 1515,00 լ.ն.
 Քանադական տոլար 1153,00 - 1158,00 լ.ն.
 Աւստրալիական տոլար 1077,00 - 1082,00 լ.ն.
 Եւրօ 1780,00 - 1790,00 լ.ն.

● **ՈՍԿԻ**
 Անգլիական մէկ ոսկի 152,500 - 157,500 լ.ն.
 Իրանեան մէկ ոսկի 138,000 - 143,000 լ.ն.
 Օսմանեան մէկ ոսկի 127,500 - 132,500 լ.ն.
 Մեքսիքական փէսոս 733,000 - 753,000 լ.ն.
 Մէկ քիլոքրամ ձող ոսկի 19,135,000 - 19,335,000 լ.ն.
 Մէկ օնս ոսկի 397,40 - 397,90 \$
 Մէկ օնս արծաթ 5,37 - 5,39 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.
 Եւրօ 1.1802 - 1.1806
 Քանադական տոլար 1.3037 - 1.3042
 Զուիցերիական ֆրանք 1.3197 - 1.3202
 Ճափոնական եէն 108.87 - 108,92
 Մէկ սթրլին 1.6899 - 1.6903

Մէկ տոլար 565 դրամ

● **ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԾՆԵԹՈՒՂԹԵՐ**
 Գինի Ա. ճշդում Գինի Բ. ճշդում
 Ա. կարգ 4,20 4,19
 Բ. կարգ 4,30 4,30

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՋԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)
 Աշխատանքի մարզը անհաճոյ պիտի թուի ձեզի: Ձեր ուզեր մասնակցիլ վէճերու: Այսպիսով, պիտի ձերբազատիք բամբասանքէ եւ զլիսացաւ: Կեդրոնացէք ձեր գործին վրայ:
ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)
 Ձեր գործատեղը պիտի գայ նոր դէմք մը, որ անտարբեր պիտի չձգէ ձեզ: Օրը յարմար է բարեկամական հանդիպումներու եւ նոր ծրագիրներ մշակելու համար:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)
 Ունիք այն տպաւորութիւնը, թէ ձեր ճիշդ տեղը չէք գտնուիր: Կը մտածէք անցեալին պատահած հարցերու մասին: Վերադարձէք ձեր ներկայի կամ աւելի ճիշդ ձեր ապագային:

ԽՆՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)
 Հանելի պահեր պիտի ապրիք ձեր քոյրերուն, եղբայրներուն եւ զարմիկներուն հետ: Շարունակեցէք ապրիլ նոյն մթնոլորտին մէջ, մի՛ շտ սիրալիր: Օրը լաւ է:

ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
 Եթէ արուեստի արժեքաւոր իրերու հաւաքածոյ պահող էք, այսօր պիտի կարենաք յարմար գինով գնել ձեր փնտոած արուեստի գործը: Օրը նպաստաւոր է ներքապէս եւ բարոյապէս հոգեկան գոհունակութեան տեսակետէն:

ԿՈՅՄ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
 Ձեր պարզ տրամաբանութեամբ եւ անկեղծ կեցեւածքով պիտի կարենաք հրապուրել ձեր շուրջիները: Ձեր հրապուրելու ուժը պիտի հասնի իր գագաթնակետին:

ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
 Ֆիզիքապէս քիչ մը տկար պիտի գայք: Կենսահիւք առէք նաեւ՝ ուշադիր եղէք ձեր սննդակազմին: Քնացէք ճիշդ ժամանակին: Անտարբեր մի՛ ըլլաք ձեր ստորջրային կեանքի մասին:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
 Ձեր առօրեայ կեանքը ձեզի կը կը թուի: Ունիք փափաքը՝ նետուելու արկածախնդրութեան մը մէջ, որ քնացած էր ձեր ներաշխարհին մէջ եւ այսօր պիտի արթննայ:

ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
 Աշխատանքի մէջ պիտի ունենաք ձեր որոշումներուն հակառակորդներ: Ձեզի կը մնայ անոնց բացատրել ձեր նպատակը եւ հասկացողութեան եզր մը գտնել:

ԱՅԾԵՂՋԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
 Շարքը յաշողութիւն պիտի բերէ ուսանողներուն եւ գործի մարդոց համար: Ձեր ճիշդ պիտի արդիւնաւորուին: Շարունակեցէք աշխատիլ նոյն բափով:

ԾՈՎԱՆՈՅԸ (21 Յունուարէն 19 Փետրուար)
 Հաւանաբար ունենաք մարտողութեան դժուարութիւն կամ նախանձի գագաթն՝ դրացիին ունեցածին նկատմամբ: Կեդրոնացէք ձեր աշխատանքներուն վրայ:

ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)
 Փորձի կ'ենթարկէք ձեր ամուսնոյն կամ կնոջ հաստատակամ եւ պարկեշտ ըլլալը: Ասիկա կ'սակած կը ճշանակէ: Բայց կենքի մէջ ընդհանրապէս ոչինչ հաստատուն է, նոյնիսկ ամէնէն մեծ հաստատութիւնները...

ՕՐԱՏԵՏՐ
 ԵՐԳԱՀԱՆԴԵՄ / ՅՈՒՅԱՍՏԱՐԱԿ / ՀԱՄԱՆՄԵՐՈՒՄ
ՆՈՒՆԷ՝ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԵՉ

Մեծ ժողովրդականութիւն վայելող հայրենի երգչուհի Նունէ Եսայեան երկրորդ անգամ ըլլալով կ'այցելէ Լիբանան, ուր այսօր էլ ոյր կ'ունենայ իր համակիրներուն բազմութեան դիմաց: Անոր երգահանդէսը կը կրէ «Նունէ Պէշուրի մէջ» խորագիրը:
 Այգային վարժարաններու բարգաւաճման ի խնդիր տեղի ունեցող այս երգահանդէսը կը կազմակերպուի Այգային իշխանութեան Ուսումնական խորհուրդին եւ ԼՕԽԻ Շրջանային վարչութեան կողմէ:
 Իր երգեցողութեամբ բազմութիւններ խանդավառելու կարողութեամբ յատկանշուած Նունէի լիբանանեան միակ էլոյթը տեղի պիտի ունենայ այսօր, երեկոյեան ժամը 8:30ին, ԵՆՒՆԵՍԹՕԻ արահիւ մէջ: Նշենք, որ Շաբաթ, 15 Նոյեմբերին, Նունէ իր համակիրներուն ներկայացած էր ճաշկերոյթ պարահանդէսով մը՝ ստեղծելով խանդավառ պահեր:



Հայ երգարուեստը ժամանակակից պարունակի մէջ վետեղող եւ աւանդականն ու ժամանակակիցը միաձուլող Նունէի էլոյթներուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Համապայիսի «Քնար» եւ «Գայիանէ» պարախումբերը՝ ղեկավարութեամբ Ֆելիքս Յարութիւնեանի: Անոնք պիտի մատուցեն երգչուհիին բնորոշ երգչուհի վրայ կատարուած պարային ներկայացումներ:

Ժողովրդական եւ էսպրատային երգերու գեղեցիկ փունջով մը Նունէ իր այսօրուան էլոյթին պիտի մեկնաբանէ իր հին թէ՛ նոր երգերէն ընտրանի մը: Համապայիսի «Քնար» եւ «Գայիանէ» պարախումբերը, անկախապէս ապրուած են նաեւ ոչ հայ ունկնդիրները, անկախապէս որ ԵՆՒՆԵՍԹՕԻ արահիւ պիտի թնայցնէ իր ուսուցանող կատարումներով:

ԱՅՍՈՐ

- Երգահանդէս՝ Նունէի էլոյթ, ժամը 20:30ին, ԵՆՒՆԵՍԹՕԻ արահիւ:
 - Նուագահանդէս՝ սեփեկային երաժշտութիւն, ժամը 20:00ին, Սէն ժոզէֆ Համալսարան:
 - Նուագահանդէս՝ ուտահար Պասեմ Ռիզբի էլոյթ, ժամը 20:15ին, «Պերիթ» բառերասրահ:
 - Նուագահանդէս ուտահար Սիմոն Շահիճի էլոյթ, ժամը 20:30ին, «Մետինա» բառերասրահ:
 - Թատրոն՝ Երեւանի Պետական Մեցայիսայի թատրոնի էլոյթ, ժամը 20:30ին, Լիբանանի Ամերիկեան համալսարանի «Կիւլպենկեան» սրահին մէջ, մինչեւ 19 Նոյեմբեր:
 - Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «20րդ դարու հայ գեղանկարիչներ», «Նոս» գ Արք» ցուցասրահ, մինչեւ 21 Նոյեմբեր:
 - Նկարչական ցուցահանդէս՝ «Ֆելէ պէր» ժորժ Մըրիէպի գործերը, «Ռոշէն» ցուցասրահ, մինչեւ 22 Նոյեմբեր:
 - Նկարչական ցուցահանդէս՝ «Մաք է գ'ուա-գօ», Ֆատիա Հատտատի գործերը, «Ալիս Մոդապ-դապ» ցուցասրահ, մինչեւ 29 Նոյեմբեր:

ՕԴԵՐԵՒՈՅԹ

ԵՐԵՎԱՆԻ, 18 ՆՈՅԵՄԲԵՐ 2003
ՊԷՅՐՈՒԹ ՄԱՍՍԱՐ ԱՍՊՈՏ
 ՋԵՐՄԱՍՍԻՃԱՆ ՅԵՐԵԿ՝ 23°C
 ԳԻՇԵՐ՝ 15°C
 ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 60%

ԱԶԳԱԿ 50 ՏՄԵՐԻ ԱՊՈՒՄՁ 18 Նոյեմբեր 1953

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ՅԱՌԱՋ»-Ի ԶԻՆԱԴԱԴԱՐ

Երկու Աշխարհամարտ, երկու գիւնադադար, եւ տակաւին խաղաղութիւն կը փնտոենք...
 Այն բոլոր խնդիրները, որոնք արիւնահեղութեան յանգեցրին, իրենց ետին ձեցցին լեռնակուտակ վէճեր եւ հարցեր, մէկը միւսէն բարդ եւ պայթուցիկ:
 Համաշխարհային Ա. պատերազմին կայծերը միտացին, միտացին եւ աշխարհ նորէն բռնկեցաւ:
 Երկրորդին գիւնադադարը կը շարունակուի սպառնալիցութեան բազմապատկութեամբ եւ հրեշտային դիւտերու կատարելագործութեամբ:
 Ինչ նշանակաւոր, որոնք լեռնէ լեռ կ'արձագանգէին 1914-1918ին, նոյն ուժգնութեամբ կը ճնշեն այսօր, 35 տարի ետը:
 Կայսրութիւններ փլան եւ գերի ժողովուրդներ փրկուեցան, այն ատեն: Փրկիչները իրենց տագնապի մատնուած են այսօր: Իսկ փրկուած ժողովուրդները նորէն կը հեւան այլ պէտք ուղծան լուծի մը տակ:
 Հսկայական վերիվայրումներ տեղի ունեցած էին Համաշխարհային Ա. պատերազմին ընթացքին:
 Փոթորիկ մը ալաւ-սրբած էր դաշնակից պետութիւններէն մէկը եւ կը սպառնար արշաւել անոր սահմաններէն դուրս:
 Տարիներու դաւերն ու ճիգերը մնացին ապարդիւն:
 Բայց Համաշխարհային Ա. պատերազմը բարձրագոյն պատուաւորեց իր ժողովուրդները:
 Ռոյլ չտայ, որ կարմիր հեղեղը նոր սահմաններ ողողէ:
 Անշուշտ իրենց ապահովութիւնը կ'ստանան ունի գերի ժողովուրդներու, Արեւելեան Եւրոպայի փրկութեան:
 Բայց ստիպուած են գոյուցութեամբ շարժիլ: Տաւ հաշուել, երկու քայլ առնել առաջ:
 (Հ.ԱՏՈՒԱԾ)


Երկու Աշխարհամարտ, երկու գիւնադադար, եւ տակաւին խաղաղութիւն կը փնտոենք...
 Այն բոլոր խնդիրները, որոնք արիւնահեղութեան յանգեցրին, իրենց ետին ձեցցին լեռնակուտակ վէճեր եւ հարցեր, մէկը միւսէն բարդ եւ պայթուցիկ:
 Համաշխարհային Ա. պատերազմին կայծերը միտացին, միտացին եւ աշխարհ նորէն բռնկեցաւ:
 Երկրորդին գիւնադադարը կը շարունակուի սպառնալիցութեան բազմապատկութեամբ եւ հրեշտային դիւտերու կատարելագործութեամբ:
 Ինչ նշանակաւոր, որոնք լեռնէ լեռ կ'արձագանգէին 1914-1918ին, նոյն ուժգնութեամբ կը ճնշեն այսօր, 35 տարի ետը:
 Կայսրութիւններ փլան եւ գերի ժողովուրդներ փրկուեցան, այն ատեն: Փրկիչները իրենց տագնապի մատնուած են այսօր: Իսկ փրկուած ժողովուրդները նորէն կը հեւան այլ պէտք ուղծան լուծի մը տակ:
 Հսկայական վերիվայրումներ տեղի ունեցած էին Համաշխարհային Ա. պատերազմին ընթացքին:
 Փոթորիկ մը ալաւ-սրբած էր դաշնակից պետութիւններէն մէկը եւ կը սպառնար արշաւել անոր սահմաններէն դուրս:
 Տարիներու դաւերն ու ճիգերը մնացին ապարդիւն:
 Բայց Համաշխարհային Ա. պատերազմը բարձրագոյն պատուաւորեց իր ժողովուրդները:
 Ռոյլ չտայ, որ կարմիր հեղեղը նոր սահմաններ ողողէ:
 Անշուշտ իրենց ապահովութիւնը կ'ստանան ունի գերի ժողովուրդներու, Արեւելեան Եւրոպայի փրկութեան:
 Բայց ստիպուած են գոյուցութեամբ շարժիլ: Տաւ հաշուել, երկու քայլ առնել առաջ:
 (Հ.ԱՏՈՒԱԾ)

ԱՅՍՈՐ՝ 18 ՆՈՅԵՄԲԵՐԻՆ

- 1823.- Սահ պատմագիր եւ լեզուագետ հայր Սիքայէլ Գաճեանի:
- 1896.- Մաղաքի արք. Օրմանեան կ'ընտրուի Պոլսոյ պատրիարք:
- 1905.- Մահ՝ Գալուստ Արիսանեանի. Երզնկայի բանտին մէջ:
- 1931.- Մահ Չէլքիփիի թարգմանիչ Յովհաննէս Խան Մասեհեանի:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ԱԿՆԱՐԿ

«ՆԱՄՈՒՍ» (ՄԱՐԴ-ՀԱՄԱԿԱՐԳԻՉ ՄՐՅՈՒՄԻՆ ԱՌԻԹՈՎ)

Իրաքանչիւր անգամ, որ աշխարհահռչակ ճատրակի վարպետ մը պիտի մրցի համակարգիչին դէմ, մամուլը զգայալից բայց ոչ այդքան ճիշդ խորագիրներ կը շռայլէ՝ «Գասպարով պիտի կարենա՞յ փրկել մարդկութեան պատիւը», «Մարդը կրնա՞յ դիմանալ համակարգիչին դիմաց»:

Այսպիսի խորագիրներու հանդիպած ենք համակարգիչին դէմ Գասպարովի կամ Քրամնիքի նախորդ ճակատամներուն, եւ կը շարունակենք հանդիպիլ այսօր, երբ հայազգի ճատրակի վարպետը անգամ մը եւս իր ուժերը կը չափէ սիլիքոնէ հրէշին հետ, որ երկվայրկեանի մը մէջ հապարաւոր շարժումներ կրնայ հաշուել:

Սակայն մարդկութեան պատիւը նժարին վրայ դնելու հարց չկայ այստեղ: Անխուսափելի է այն օրը, երբ աղամորդիներ համակարգիչներու դէմ իրենց կատարած ոչ մէկ մրցումը պիտի կարենան յաղթել. Գասպարովի իսկ վկայութեամբ այդ մէկը պիտի ըլլայ առաւելագոյնը 5 տարի ետք: Բայց արդեօ՞ք այդ մէկը կը նշանակէ, թէ մարդկութիւնը իր պատիւը պիտի կորսնցնէ կամ ինքզինք համակարգիչէն ստորադաս պիտի նկատէ: Ի վերջոյ նոյն այդ աղամորդին է, որ կատուցած է համակարգիչը, եւ զայն օժտած հրաշալի կարողութիւններով, եւ մարդուն հանճարը ու հրաշագործ միտքը այնքա՞ն մեծ եղած է, որ յաջողած է կատուցել մարդկային միտքին իսկ գերազանցող սարք մը:


Կարիքը չկայ համակարգիչէն սարսափելու, խրտչելու եւ խորհելու, թէ վաղը անոնք պիտի գերազանցեն մարդը շարք մը ասպարէզներու մէջ, ըլլան անոնք մարզաձեւ, արուեստ թէ գիտութիւն: Ինքնաշարժի գիտը վերջ չդրաւ վազքի մրցումներուն, այլ պարզապէս անելոց ուր մարզաձեւ մը եւս՝ ուր դէկին վրայ մարդն է կրկին:

Այսօր, Միացեալ Նահանգներու մէջ Գասպարով պիտի կատարէ համակարգիչին դէմ իր 4րդ եւ վերջին մրցումը: Ինչ ալ ըլլայ մրցումին արդիւնքը, մարդկութիւնը յաղթած է: Իսկ եթէ աշխարհը այդքա՞ն մտահոգ է մարդկութեան պատիւով, ապա թող իր աչքերը յառէ հոն, ուր պատերազմ, սով եւ անարդարութիւն կայ...:

ԽԱՉԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ԼԷՅՔԸՐԶ՝ ԱՆԶՍՊԵԼԻ



Զոպէ Պրայընթի հերթական «թռիչք»ը

Էն. Պի. Էյ.ի երէկուան մրցումներուն Լոս Անձելըս Լէյքըրզ 99 - 77 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց Մայեմիի վրայ: Այսպէսով, Լէյքըրզ իր յաղթանակներուն թիւը բարձրացուց ճի: Միւս կողմէ, Մայեմի ունի միայն երկու յաղթանակ եւ կրած է 8 պարտութիւն:

Թորոնթօ երկու օվըր թայմի կարիքը ունեցաւ պարտութեան մատնելու համար Հիուսթընը՝ 101 - 97 արդիւնքով: Սաքրամենթօ 106 - 104 արդիւնքով տասպակեց Կոլորն Սթիթը:

www.lemagan.com

ՃԱՏՐԱԿ. ՄԱՐԴ-ՀԱՄԱԿԱՐԳԻՉ ԳԱՐՃԱԿԱՏՈՒՄ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՍԸ ՃԱՇԱԿԵՑ

Ճատրակի պատմութեան մեծագոյն վարպետը հանդիսացող հայազգի Կէրի Գասպարով համակարգիչին դէմ կատարած իր երրորդ մրցումին յաջողեցաւ յաղթանակ մը արձանագրել հաւասարեցնելով արդիւնքը:

Առաջին խաղը հաւասարութեամբ ավարտած, իսկ երկրորդ խաղին պարտուած Գասպարով այսպիսով վերականգնեց ճակատումը լաւ արդիւնքով ավարտելու իր



Գասպարով՝ ճակատումէն առաջ...

յոյսերը: Չորրորդ եւ վերջին մրցումը տեղի պիտի ունենայ այսօր:

ԹԵՆԻՍ. ՄԱՍԹԸՐԶ

ԱԿԱՍԻ ԹԵՆԻՍԻ ԴԱՍ ԱՌԱԻ ՖԵՏԵՐԷՐԷՆ...

Երէկ առաւօտեան կանուխ ժամերուն (Պէյրոթի ժամանակացոյցով) Հիուսթըն Թէքսասի մէջ վերջ գտաւ թենիսի «Մասթըրզ» մրցաշարքը: Աւարտական մրցումը, որ իրար դէմ կը հանէր Ռիմպլըտընի ախոյեան Ռոժէ Ֆետերերը եւ Աւտրալիոյ բաց մրցաշարքի ախոյեան Անտոն Ակասին, նմանեցաւ փորձ-դասընթացի մը, ուր 22ամեայ զուիցերիացի թենիսիստ խուսափեց իր արտուստու 33ամեայ «վերջերան» ամերիկացիին, 6-3, 6-0, 6-4 արդիւնքով յաղթանակ մը արձանագրելով:

88 վայրկեան քրտնելուն համար Ռոժէ Ֆետերերը ստացաւ 1,52 միլիոն տոլար եւ տարին ավարտեց միջազգային դասաւորման երկրորդ դիրքին վրայ:

Ֆետերերը, որ այս տարեշրջանին տիրացաւ 7 այլ մրցաշարքերու տիտղոսներուն, մրցումի ավարտին յայտարարեց. «Այս տարեշրջանի լաւագոյն մրցումներէն մէկն էր այս: Ուրախ եմ ամբողջ տարեշրջանի ընթացքին արձանագրած արդիւնքներովս: Միշտ ալ վերիվայրումներ տեղի կ'ունենան, սակայն կը թուի թէ այս տարին կատարեալ էր»:



Ֆետերերը՝ տարեշրջանի «մասթըրզ»ը

Ակասի պարտուած տուն չվերադարձաւ: Ան գրպանէց 7 հարիւր հազար տոլար եւ հանդիսացաւ անցնող 25 տարիներուն «Մասթըրզ»ի ավարտականին հասած մարկիկներուն ամէնէն տարեցը: Նշենք, որ Ակասի նոյն այս մրցաշարքի տիտղոսին տիրացած է միայն մէկ ան-

գամ, 1990ին, պարտութեան մատնելով Շթեֆան Էտպերկը: «Քու շարժումը եւ խաղարկութիւնը դիտելը ներշնչում է. պատճառ պիտի դառնաս որ անելի՛ լաւ խաղամ գալ տարի», ըսաւ Ակասի, իր խօսքը ուղղելով (ոչ՝ կրաֆի) Ֆետերերին...:

ԱՅՍՕՐ Հ.Մ.Ը.Մ. - ՕԼԻՄՓԻՔ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ

Այսօր, կէսօրէ ետք ժամը 2:15ին, Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական կապմը բարեկամական մրցում մը պիտի կատարէ Լիբանանի ախոյեան եւ բաժակակիր Օլիմպիքի դէմ: Մրցումը տեղի պիտի ունենայ Պուրձ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ:

ՊԱՍԲԵԹՊՈԼ. Դ. ԴԱՍԱԿԱՐԳ

Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ ԶԱԽԶԱԽԵՑ ԱԼՆԱԱՄԷՆ

Պասքեթպոլի Լիբանանի Դ. դասակարգի ախոյեանութեան ծիրէն ներս, Լեռնալիբանանի զտումի մրցումներուն Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի տղաքը արձանագրեցին իրենց երկրորդ յաջորդական յաղթանակը, այս անգամ 94-39 արդիւնքով պարտութեան մատնելով Ալնաամէն:

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի տղոց յաջորդ մրցումը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 22 Նոյեմբեր, երեկոյեան ժամը 6:00ին, նոյնպէս Քաֆարիապապի դաշտին վրայ: Մրցակից խումբն է՝ Հարաժէլ:

ԾԱՆՐԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

ԶԻՆԱՑԻՔ ԿԸ ՏՊԱԻՈՐԵՆ...



Ժանկ ԿուժէԿ

Վանքուվըրի մէջ ընթացքի մէջ է ծանրաբարձութեան աշխարհի ախոյեանութիւնը: Երէկ տեղի ունեցան 69 քկ. տղոց եւ 53 քկ. աղջկանց մրցումները, իսկ առջի օր՝ 62 քկ. տղոց եւ 48 քկ. աղջկանց մրցումները:

Երէկուան մրցումներուն չինացի ժանկ ԿուժէԿն արաշէի եւ էփոլի ժրթի ընթացքին յաջորդաբար 152,5 եւ 192,5 քկ. բարձրացնելով տիրացաւ ոսկի մետալին: Երկրորդ հանդիսացաւ ռուս Վլատիսլաւ Լուբանին (147,5 + 192,5 քկ.), իսկ երրորդ՝ քորէացի Լի Պայ-Եանկ (150 + 190 քկ.):

Աղջկանց 53 քկ. դասակարգի մրցումներուն ախոյեան հանդիսացաւ թայլէնցի Փոլսաք Ուտոմփորն (100 + 122,5 քկ.):

Տղոց 62 քկ. կշիռքային դասակարգի մրցումներուն թուրք Հալիլ Մուլու հանդիսացաւ առաջին (147,5 + 175 քկ.): Չինացի Շի Ժի-Եոնկ գրաւեց երկրորդ դիրքը (147,5 + 170 քկ.), իսկ Պիելոնուսիան ներկայացնող Հենաթի Ալիասլուք հանդիսացաւ 3րդ (142,5 + 175 քկ.): Ալիասլուք թէեւ նոյնքան ծանրութիւն բարձրացուցած էր որքան չինացին, սակայն անկէ ծանր կշիռելուն պատճառով հանդիսացաւ 3րդ:

48 քկ. կշիռքային դասակարգին մէջ ախոյեան հանդիսացաւ չինացի Ուանկ Մինկ-Եուան (90 + 110 քկ.):

Յաջորդող օրերուն տեղի պիտի ունենան անլի բարձր կշիռքային դասակարգերու մրցումները, ուր մեծ ակնկալիքներ կան Հայաստանը ներկայացնող մարկիկներէն:



Փոլսաք Ուտոմփորն

Գրատուն ՈՍԿԵՂԱՐ VOSKETAR Bookstore



★ Մանկական ԱԲԳ եւ հեքիաթներ:

★ Հռչակատր բառարաններ Oxford, Longman, Larousse:

★ Երագներու բանալի նոր լոյս տեսած Երագահան, հոգեբանական եւ հոգեվերլուծական տրեւումներով:

Պուրձ Համուտ, Ս. Փրկիչ Եկեղեցւոյ կից, Հեռ.: 01/264750
E-mail: vosketar@yahoo.com

